ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 29 >> հունիսի 2016թ. N 57

ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ երկրորդ մասով, 164-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Դավիթ Դավթյանի 2016 թվականի հունիսի 27-ի դիմումը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Դավիթ Դավթյանին տրամադրել 2016-2017 աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2016 թվականի հուլիսի 7-ից օգոստոսի 9-ը ներառյալ՝ 24 աշխատանքային (20 նվազագույն, 4 լրացուցիչ) օր տևողությամբ:
2. Դավիթ Դավթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում քարտուղարության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Մարիամ Առուշանյանին:
3. Դավիթ Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2016 թվականի օգոստոսի 10-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ